

ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

**ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

Հետազոտության թեմա՝ Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայի բովանդակությունը
և գրողի ասելիքը

Հետազոտող ուսուցիչ՝ Նելլի Հովհաննիսյան
Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԱԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Լևոն Շանթի աշխարհայացքը.....	5
Արևմտահայերենի հնչյունական համակարգի առանձնահատկությունները.....	10
Արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները.....	11
Արևմտահայերենի քերականական առանձնահատկությունները.....	12
Եզրակացություն.....	
Գրականության ցանկ.....	16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գրական լեզուն համաժողովրդական լեզվի առավել մշակված, նորմավորված տարբերակն է: Այն ստեղծվում է պատմական երկարատև զարգացման ընթացքում: Պետականություն ունեցող ժողովուրդների գրական լեզուն ունենում է ավելի լայն գործառույթներ՝ դառնալով գիտության ու կրթության, գանգվածային լրատվամիջոցների, կինոյի ու թատրոնի լեզու: Ժամանակակից հայոց լեզուն ունի երկու տարբերակ՝ արևելահայերեն և արևմտահայերեն: Արևելահայերենը գործում է ՀՀ տարածքում, իսկ արևմտահայերենը՝ Սփյուռքում:

Աշխարհաբարը՝ որպես գրական լեզվի նոր որակ, հանդես է գալիս 17-րդ դարում:

19-դարում աշխարհաբարը դառնում է տիրապետող, և այդ դարի առաջին քառորդում հայ ժողովրդի հասարակական, քաղաքական, մշակութային կյանքում տեղի ունեցած տեղաշարժերը նպաստում են նոր լեզվի մշակմանն ու զարգացմանը: Արևելահայերենը ՀՀ պետական լեզուն է, որով գրվել է Սահմանադրությունը, նրանով արձակվում են բոլոր հրամանագրերը, իրականացվում է հանրակրթական և բարձրագույն կրթությունը:

Արևմտահայերենը նախկինում կոչվել է նաև տաճկահայերեն՝ ելնելով նրա տարածման սահմաններից: Հայերենի երկփեղկվածությունն սկսվում է միջնադարից, երբ ի հայտ են գալիս հնչյունական, բառապաշարային- բառիմաստային, քերականական տարբերություններ: Գրական արևմտահայերենն իր արմատներով գնում է դեպի միջին հայերենը:

Տարբեր են նաև երկու տարբերակների ճյուղերի հիմքերը: Արևելահայերենը ձևավորվել է Արարատյան բարբառի կամ ում ճյուղի հիման վրա, իսկ արևմտահայերենը՝ Պոլսի կամ կը ճյուղի հիման վրա: Բարնառախմբերի անվանումների հիմքում ընկած է Հրաչյա Աճառյանի առաջարկած սկզբունքը՝ բայի սահմանական եղանակի կազմության առանձնահատկությունը՝ կարդում եմ – կը կարդամ:

Սույն հետազոտական աշխատանքում կխոսվի Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայի կարևորության, արևմտահայերենի հնչյունական, բառապաշարային և քերականական առանձնահատկությունների, սովորողների շրջանում արևմտահայերենի արտասանական, քերականական ձևերի կազմության դժվարությունների հաղթահարման մասին, ինչպես նաև կնշվեն արևելահայերենի և արևմտահայերենի նմանությունները և տարբերությունները:

Նպատակները

1. Ներկայացնել Լևոն Շանթին՝ որպես մարդկային փոխհարաբերությունների, մտքերի և հույզերի անհանգիստ ներաշխարհի ստեղծարարի:
2. Վերհանել արևմտահայերենի բառային և քերականական (ձևաբանական և շարահյուսական) առանձնահատկությունները՝ ըստ Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայի:
3. Մոտիվացնել սովորողին հաղթահարելու արևմտահայերենի բառիմաստային, արտասանական, քերականական դժվարությունները:
4. Մեր սերմանել արևմտահայերեն ստեղծագործությունների նկատմամբ:

ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԸ

Հայ գրականության և հասարակական կյանքի կապը առանձնակի ուժով դրսևորվեց 19-րդ դարի երկրորդ կեսին: Նալբանդյանից մինչև Բաֆֆի ու Թումանյան գեղարվեստական միտքը ազատագրության ուղիներ էր փնտրում: Իրականության տարբեր ընկալումներն արգելք չհանդիսացան, որ ռեալիզմի և ռոմանտիզմի ներկայացուցիչներն ունենային ընդհանուր մտահոգություններ, ապրեին ժողովրդին տանջող հարցերով: Հայ գրականությունը ապրեց իր գաղափարական զարգացման բարձրագույն փուլը: Արևմտահայ գրականության մեջ իրապաշտությունը լայնորեն ծավալվեց Արփիար Արփիարյանի, Գրիգոր Զոհրապի և Երվանդ Օտյանի երկերում: Հայ գրականությունն ավելոծվում էր ժողովրդի կեցության բազմազան հարցերով և ելքեր որունում բռնությունից ազատվելու համար: Լևոն Շանթի աշխարհայացքը ևս ձևավորվում է գրական- գաղափարական այս մթնոլորտում:

Լևոն Շանթը հայ գրականության մեծ վարպետների՝ Շիրվանզադեի, Թումանյանի, Վարուժանի և Իսահակյանի ժամանակակիցն է: Իր ստեղծագործական կյանքի հիսունից ավելի տարիները նա նվիրել է մարդկային փոխհարաբերությունները, մտքերը ու հույզերը նկարագրելուն: Լևոն Շանթի իդեալը անհատն է, հաճախ կյանքի հոգսերից վերացած անհատը, որը ազատություն է որոնում պատրանքի լուսավոր հորիզոններում: Շանթը այն եզակի հեղինակներից է, որի աշխարհայացքը ձևավորվեց երկու տարբեր միջավայրերում՝ հայկական և եվրոպական: Վերջինի ազդեցությունն ավելի վճռական եղավ նրա ստեղծագործական կյանքի վրա: Ապրելով հայրենիքից հեռու՝ Շանթը փորձում է իր ժամանակի համամարդկային թվացող գաղափարները շաղկապել հայ կյանքին: Իրականության այս ընկալումը իր հետ բերում է մարդու գեղարվեստական մեկնաբանության յուրօրինակ սկզբունք: Շանթի երկերում կերպարը ձևավորվում է ոչ թե ըմբռնումների ու բարոյական նորմերի ամբողջություն, այլ կյանքի, առօրյա դեպքերի ու վերացական գաղափարի համադրություն, և այդ տարօրինակ պատվաստի հետևանքով նրա կերպարները զրկվում են ազգային բնավորության ամբողջական կենսունակությունից: Շիրվանզադեն իրավացիորեն

նշում է.«Մենք կարոտ չենք հեղինակի հերոսների ` գրքերից քաղած դատողություններին, պերճախոսության, մենք նրանցից պահանջում ենք կյանք, նրանք պիտի ներկայանան մեզ պատկերներով, գործերով, շարժուն, կենդանի պիտի ապրեն, մտածեն, զգան և ոչ թե դատողություններ անեն»: Հեռանալով սոցիալական կյանքի անհաշտելի հակասություններից` Շանթը ձգտում է հաստատել մարդու և բնության հավիտենական ներդաշնակության գաղափարը:

Իրենց բնույթով ու գաղափարներով տարբեր երկերում նա արտահայտեց նույն խոր հուսահատությունը, ցնորական գեղեցկության նույն տենչանքը, իրականությունից հեռանալու և պատրանքների աշխարհում ապաստան գտնելու նույն ձգտումը:

«Հին աստվածներ» դրամայի համառոտ բովանդակությունը և գրողի ասելիքը Իրականությունից դեպի պատրանք կատարած շրջադարձը պատահական չէր: «Հին աստվածներ» դրամայով գրողը հետ դարձավ անցած ճանապարհից և նոր, անիրական արահետով դիմեց դեպի ցնորական գեղեցկության ակունքները: «Հին աստվածներ» դրամայի դեպքերը տեղի են ունենում «Հազարամյակ մը մեզմե առաջ»: Դրամայի տարերքը ` մարդու մենակության և ճակատագրով նրան վիճակնած հավիտենական տառապանքի գաղափարը, Շանթը տեղադրեց հեռավոր պատմության սովերագծի մեջ: Տանջանքի և երազների ուրույն մի աշխարհ է պատկերված այս դրամայում: Միջավայրը Սևանի հինավուրց կղզին է, ջրի կապույտ շերտով մեծ աշխարհից անջատված անապատը, ուր չկան կյանքի լույսերն ու սովերները, չկան իսկական կրքեր ու բախումներ: Հերոսները մարդիկ են, ովքեր հանուն անդրաշխարհային երանության դատապարտված են պայքարելու իրենց մարդկային էության դեմ: Բայց ջերմեռանդ աղոթքներով և խնկի բույրով արտաքին աշխարհը չի մոռացվում, աշխարհիկ կյանքը հարատևում է Կույր վանականի կրոնական մոլեգնության, Աբեղայի հիվանդ ու անարատ սիրո և վանականների գիշերային տեսիլներում: «Հին աստվածներ» դրամայի հերոսները ապրում են երկու աշխարհում ` իրականության և մտապատրանքների: Առաջինը աղքատ ու խեղճ անապատն է, երկրորդը` այդ խեղճությունից ծնված շքեղ ու հոգեթով երազը: Այս դրամայում ճշմարիտ բախումներ չկան, կա պայքար. հերոսները մաքառում են , որ ամեն մեկը իր մեջ հաղթահարի անհաղթելին: Հերոսները հակառակորդներ չեն , այլ համախոհներ, որովհետև ամեն մեկի սրտում և հոգում ծվարել է հավիտենական

տառապանքի դատապարտված նույն մարդը: Այստեղ նկատելի է Կույր վանականի, Վանահոր և Աբեղայի կերպարների նմանությունը: Աշխարհը չտեսնելու և տեսածը մոռանալու մոլեգնությամբ լցված Վանահայրը պատրաստ է քանդելու նորաշեն եկեղեցին: Վանահոր ներաշխարհում բախվում են երկու հակադիր բարոյականություն, երկու հակադիր ըմբռնում: Այնտեղ, ուր ճերմակավորը տեսնում է հավերժական կյանք ու գեղեցկություն, ծիծաղկոտ ծով, արև և լույս, Վանահայրը ցանկանում է տեսնել մոայլ մի անապատ, Վանահայրը չի ցանկանում հաշտության եզր գտնել աշխարհի և անապատի միջև. ժխտելով առաջինը՝ ձգտում է հաստատել երկրորդի ճշմարտությունը:

Ճերմակավոր- Դիտե՞, դիտե՞: Տե՞ս, այդ երկու- երեք խարխուլ խցիկները. Չե՞ որ դուն ես շիներ. հապա այն մատուռը, որ քու աճապարանքն է կառուցեր, և վերջապես, նայե՞ քու այդ նոր եկեղեցիդ, որուն գմբեթը օր օրի կբարձրանա վեր, և ուրու գլխուն շուտով քու , իսկ ձեռքովդ խաչը պիտի տնկես:

Վանահայր- Այո՞, եթե տերը կամենա:

Ճերմակավոր- Ա՞յ, սևավոր, ինչո՞ւ ես ժողվեր գլխուդ այ սևազգեստ ու սևահոգի մարդիկը, ինչո՞ւ ես եկեր այդ հինավուրց կղզին: Ելի՞ր, ելի՞ր, քշե՞ նորեն դուրս դեպի կյանքը այդ թշվառ ու մոայլ ամբոխը: Դու՞րս այս կղզիեն, դուք, որ զգայարանքները չորցնել կուզեք ու կրքերը մարել: Դո՞ւրս, մի՞ աղարտեք իմ աստվածներու այս սուրբ դրախտը:

Վանահայր- Հոս դրախտ չկա: Ես այս ժայռին վրա իմ վանքս հիմնեցի, ասկե ետքը հոս անապատ պիտի կոչվի:

Ճերմակավոր- Անապատ...այս ծիծղուն ծովակի ծոցին, այս թարմ արևուն դեմ: Հեռո՞ւ, կոխած տեղդ հին տաճար է աստվածներու. հեռու, հին աստվածներու շենքեն է , որ կխոսիմ քեզի:

Վանահայր- Հոս մեռան քու աստվածներ, և անոնց ավերակներուն վրա ես իմ Աստծու տաճարը կառուցի: Հոն կթագավորե միայն Աստծո շունչը:

Ճերմակավոր-Հոն կթագավորե տանջանքի գործիքը և մահը:

Վանահայր- Տանջանքն է, որ կբարձրացնե հոգին, տառապանքն է, որ կմաքրե: Եվ կյանքին ամենեն խոր բանը մահն է:

Ճերմակավոր- Տառապանքը կյանքի խոցն է, իսկ մահը՝ կյանքի քայքայումը:

Լևոն Շանթ, «Հին աստվածներ», էջ360- 361:

Երիտասար տարիներին Վանահայրը փոխադարձ սիրով կապված է եղել Իշխանուհու հետ, բայց ինչ – ինչ նկատառումներից ելնելով նրանց համատեղ կյանքը չի ստացվել: Եվ երբեմնի Հովհաննեսը խզել է բոլոր կապերը արտաքին աշխարհի հետ՝ իրեն նվիրելով եկեղեցուն և Աստծուն:

Նա երկվություն ապրող կերպար է : Մերթ նա եկեղեցին կառուցող վարպետին հորդորում է փակել արևի ճանապարհը, մերթ ինքն իրեն խոստովանում , որ առանց արևի ապրել հնարավոր չէ. «Արև. Մեզի անպատճառ պետք է արև: Գոնե լուսամուտ մը, ճեղք մը,գոնե գողունի ներս սպրդած ճառագայթ մը»: Հետո փոշմանում է. «Պետք է խցվի այդ անցքը, ուրկե արևը կը նայի ներս»

Դրամատիկ և հակասություններով լեցուն կերպար է նաև Աբեղան: Նրա մեջ պայքարում են երկու իրարամերժ զգացողություններ՝ հոգևորը և աշխարհիկը: Աբեղան մանկուց ապրել և դաստիարակվել է անապատում՝ կտրված լինելով արտաքին աշխարհից: Աբեղայի գիտակցական կյանքն անցել է անապատում. դրսի աշխարհից նա նույնիսկ իր անունը չի բերել: Մյուս հոգևորականներից տարբերվում է նրանով, որ նա անմնացորդ նվիրված է Աստծուն: Թվում էր՝ նա այդպես էլ կապեր բուսական համր կյանքով, եթե անակնկալ դիպվածը չխաթարեր նրա հավատքը: Պատահական դիպվածն է նրան ծանոթացնում աշխարհիկ կյանքին, երբ ծովի ալիքներից փրկում է իշխանադուստր Սեդային: Աբեղան անտարբերությամբ է լսում Իշխանի խոսքերը նժույզի, սրի, պալատական կյանքի մասին, բայց նրա գիտակցության մեջ գամվում է Սեդան: Այդ օրվանից նա կորցնում է հանգիստը և ընկնում երկվության մեջ՝ ապրելով միաժամանակ երկու աշխարհներում: Հոգու մղձավանջային վիճակում նրա միակ լուսավոր կետը մտապատրանքներում Սեդային ժամանակ առ ժամանակ հանդիպելն էր և նրա սիրո խոստովանությունները լսելը: Դրա պատճառով նրանից երես են թեքում վանականները:

Մոլորված Աբեղան օր ու գիշեր դեգերում է իրականության և պատրանքների ոլորտներում: Անձուկ է նրա իրական աշխարհը՝ կղզին իր վանքով ու չարքերից վախեցած վանականներով, իսկ պատրանքների աշխարհն անընդհատ ծավալվում է՝ բացելով հրաշալի հորիզոններ:

Ճգնավորը հիմնովին խառնում է Աբեղայի առանց այն էլ շփոթված մտքերը:

Վանահայրը նրան զգուշացնում է , որ չնայի ծովին, որը բնության սիրտն է, այլ նայի երկնքին, որը բնության միտքն է: Ի վերջո հաղթում է աշխարհիկ զգացողությունը: Աշխարհիկ գնալու մտադրությամբ նա իր մտապատկերներում հայտնվում է իԺխանի և զորականների խնջույքին, ձեռքն է վերցնում գինու թասը, որը երբեք մինչ այդ չէր արել և խմում կյանքի և աշխարհի օրենքով, խմում կովի կենացը, որը վերնն է՝ ամպերու և խավարին մեջը: Ըստ նրա՝ կռիվը դրսում է՝ աշխարհի վրա, ուրկե նրանք՝ զորականներնը կուգան, և ծովուն մեջ, ուրկե ինքը կուգա: Աբեղան ավարտում է կյանքը ինքնասպանությամբ՝ իրեն նետելով այն ալիքների մեջ, որտեղից մի օր փրկել էր Սեդային՝ երկրորդ կյանք պարգևելով նրան: Սեդային հանդիպելու համար նա իրեն նետում է ծովը՝ իր վերջին խոսքը ուղղելով Կույր վանականին՝ Իզուր աչքերդ հանեցիր»:

Կույր վանական- Գացե՞ք, թաղեցե՞ք... ձեր եկեղեցիին սեմին. Հին աստվածներու սեմին. Ա՛, կարող են, հզոր, այդ հին աստվածները. դեռ շատ են հզոր...

Ձայն մը- Իզու՛ր հանեցիր աչքերդ:

Կույր վանական- Որուն ձայնն ես դուն... կուզեի նայիմ աչքերուդ խորքը...

Ձայնը- Իզու՛ր հանեցիր աչքերդ:

Կույր վանական- Իզու՛ր..... էջ435

Այդ վերջին խոսքերը ապացուցում են Աբեղայի՝ աշխարհիկ կյանքով ապրելու վերջնական որոշումը:

Իրեն նետում է ծովը՝ իր վերջին խոսքը ուղղելով Կույր վանականին՝ «Իզուր աչքերդ հանեցիր»:

Կույր վանական- Գացե՞ք, թաղեցե՞ք... ձեր եկեղեցիին սեմին. Հին աստվածներու սեմին. Ա՛, կարող են, հզոր, այդ հին աստվածները. դեռ շատ են հզոր...

Ձայն մը- Իզու՛ր հանեցիր աչքերդ:

Կույր վանական- Որուն ձայնն ես դուն... կուզեի նայիմ աչքերուդ խորքը...

Ձայնը- Իզու՛ր հանեցիր աչքերդ:

Կույր վանական- Իզու՛ր..... էջ435

Այդ վերջին խոսքերը ապացուցում են Աբեղայի՝ աշխարհիկ կյանքով ապրելու վերջնական որոշումը:

**ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Արևմտահայերենը արևելահայերենի նման գրության մեջ պահպանում է մաշտոցյան տառերը: Տարբեր են այդ գրերի արտասանությունը, որոնք կապվում են միջինհայերենյան ծագում ունեցող մի համալիր հնչյունափոխության. այն կոչվում է տեղաշարժ- տեղափոխություն: Ըստ դրա՝ հայերենի պայթական բաղաձայնների մեջ կատարվում է հետևյալ փոփոխությունը. ձայնեղները արտասանվում են շնչեղ խուլ, իսկ խուլերը՝ ձայնեղ: Ըստ այդմ՝ «Հոս դրախտ չկա» նախադասությունը կարտասանվի «Հոս թրախդ չգա»: Որոշակի տարբերություն կա նաև ո և ր հնչյունների արտասանության մեջ. արևելահայերենում դրանք խստորեն տարբերակված են և առաջացնում են իմաստային տարբերություն (տար- տառ, արու- առու), իսկ արևմտահայերենում հնչում են միակերպ. կոշտ ո-ն արտասանվում է փափուկ ր-ի նման. «Հոս մեռ(ր)ան քու աստվածներդ»: «Կողքես վեր թռ(ր)ավ արեղան, ցատկեց ջուրը» էջ 364:

Արևմտահայերենը առ այսօր գործածում է գրաբարյան ուղղագրությունը՝ ի տարբերություն արևելահայերենի, որը 1922 թվականից անցել է նոր՝ արեղյանական գրության:

ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բառապաշարի առումով և՛ արևելահայերենը, և՛ արևմտահայերենը ժառանգել են ընդհանուր հայերեն բառերը, սակայն կան որոշ բառեր, որոնց արտահայտած իմաստները երկու տարբերակներում նույն չեն: Այսպես՝ հակառակորդ բառը արևմտահայերենում նշանակում է չեմպիոն, պահարան-ը՝ նամակածրար, քաղցր-ը՝ մուրաբա, մականուն-ը՝ ազգանուն և այլն:

Կան բառեր, որոնք ներկայացնում են ուղղագրական- հնչյունափոխական տարբերակներ՝ կենտրոն- կեդրոն, մակույկավար- մակուկավար, գցել- ձգել, ինձ- ինձի (Է°, ապարանքը կդառնա և առանց ինձի):

Արևմտահայերենին բնորոշ բառեր և բառաձևեր.

Իյնալ-ընկնել	ստացվածք- ունեցվածք
Աղեկ- լավ	մեյ մը- մենակ, միայն, մեկը
Ատեն- ժամանակ	փրթել- կտրել
Հոս- այստեղ	քիչիկ- մի քիչ
Ըլլալ- լինել	ինքզինքդ- ինքն իրեն
Աս- սա	առտու- առավոտ
Աղվոր- գեղեցիկ	զգայարանք- զգայարան
Ըսել- ասել	երկուք-երկուս
Ատ- դա	պատահմունք- պատահականություն
Գացել գնացել	գեշ- վատ
Գոցել- փակել	մանչ- տղա
Կանուխ- շուտ	չի կրնար- չէր կարողանա
Ալ -ել	հոստեղ- այստեղ
Ասկե – սրանից	լեցված- լցված
Ատիկա դա	հուրք- կրակներ, Անոնց- նրանց

ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արևմտահայերենի և արևելահայերենի քերականական հիմնական տարբերությունները պայմանավորված են պատմական տարբեր հիմքերով: Արևմտահայերենը բայի սահմանական եղանակի ներկա ժամանակը կազմում է կը մասնիկի միջոցով՝ կը գրեմ, կը կարդամ, իսկ արևելահայերենը՝ ում- ով՝ գրում եմ, կարդում եմ:

«Աբեղան հանկարծ կը խլե վերարկուն ու կը դառնա դեպի աղջիկը» Լևոն Շանթ «Հին աստվածներ, էջ 372»:

«Հա, կուգան, կհավաքվին գլխուս»;
«Քանի իսելքս կհասնի, եղեր եմ քու թևիդ տակը» էջ 376: «Աշխարքն է, որ կուզե մտնե կղզիս! ՏԿից ժայռին կերևա ուրիշ միգանուշ մը» էջ 378:

Արևելահայերենից տարբեր է նաև վաղակատարի կազմությունը.

«Մենք քեզ գեշ ինչ ենք ըրեր»:
ՏԻնչու ես եկեր եկեր այս անմարդ կողմեր! ՏԵս հասցուցեր եմ պսակեր, կատարեր եմ իմ պարտքս: Աշխարհին տվեր եմ իմ հարկս! էջ 391:

Գրաբարի բայական 4 լծորդություններից գրական արևելահայերենը պահպանել է միայն 2-ը՝ ել և ալ, իսկ արևմտահայերենը՝ 3-ը՝ ել, ալ, իլ, որոշ բայերում էլ՝ ու լծորդությունը:

«Հրաման կուտա իշխանուհին, որ մեկնիմ»:
«Այո, կյանքիս ամենաքաղցր վայրկյաններ, չեմ քաշվիր կրկնելու, ինչ- որ ճշմարիտ է. չեմ ուզեր քաշվիլ» էջ 394: «Ես կուզեմ, որ ամենքն ալ, որոնց համար սրտիս խորքը հարգանք ունիմ, ժիտակ նային իմ երեսիս» էջ 394: «Ում թողում սա ձիս և թուրս»:

Տարբերություններ կան նաև գոյականների թվակազմության և հոլովման համակարգերի միջև: Եթե արևելահայերենում ընդհանրական հոլովումը ի -ն է, ապա արևմտահայերենում ու-ն է:

«Մեյ մը ատոնց հարցնող ըլլա՝ ով մարդ, ինչ ես գտեր այդ ձախողություններու, այդ տաժանակիր աշխատանքի, այդ կարոտություններու մեջ» էջ 419:

Հոգնակիի կազմության մեջ հիմքում ի և ու հնչյուններ ունեցող մի շարք բառեր արևմտահայերենում հանդես են գալիս անհնչունափոխ ձևով:

«Ջուրերը կը հուզվին, ջուրերը հուզվիլ են սկսել»:

Տարբեր են նաև նաև ստացական հոգնակիի կազմության ձևերը. էթե արևելահայերենում ստացական հոգնակի կարող են ունենալ միայն միավանկ բառերը. այդ ձևը կազմվում է եր մասնիկը ներ- ով փոխարնելով՝ մեր գրքերը- գրքներս, մեր աչքերը- աչքներս, ապա արևմտահայերենում անկախ վանկերի քանակից՝ բառի հոգնակի հիմքին ավելանում են նի մասնիկը և ստացական հոդը: «Իշխանի մարդիկը գրեթե բռնի խլեցին աղջիկը թներնուդ մեջեն»: էջ368

Արևմտահայերենի շարահյուսական առանձնահատկություններից է անձի առման քերականական կարգի բացակայությունը: Այս կարգը արևելահայերենում հայցական հոլովի դրսևորումներից մեկն է, որը ձևավորում է ուղիղ խնդիրը, որը անձնանիշ լինելու դեպքում դրվում է տրականաձև հայցականով, իսկ էթե իրանիշ է, ապա ուղղականաձև հայցականով: Արևմտահայերենում ուղիղ խնդիրն ունի միայն մեկ ձև, որը դժվարացնում է ենթական և ուղիղ խնդիրը իրարից տարբերելը: Այս դեպքում վճռորոշ է շարահյուսությունը. Ենթական միշտ նախադաս է ուղիղ խնդրին: «Ձիս ու սուրս թե հերիք չեղավ , կուտայի քեզի և աղջիկս» էջ267: «Նա թողեր է ամեն իշխանական կյանք ու վայելք, իր զավակներն ու իր ապարանքը» էջ365:

Արևելահայերենի և արևմտահայերենի շարահյուսական տարբերություններից կարևոր է նաև ժխտական դերանունների գործածությունը բայի հետ. արևելահայերենին բնորոշ է կրկնակի ժխտումը, իսկ արևմտահայերենին՝ ոչ: «Ոչ որ կտրեր է կապը աշխարհին հետ» էջ374:

Արևմտահայերենին բնորոշ է նաև ստացական հոդի և անձնական դերանվան միաժամանակյա գործածությունը.

«Հոս մեռան քո աստվածներդ, անոնց ավերակներուն վրա ես իմ Աստիտու տաճարը կառուցի» էջ361: «Տղաս, քու իշխանդ քու առջևդ շատ աղքատ է» էջ267:

Արևմտահայերենում սեռական հոլովը կարող է գործածվել որոշյալ հոդով:

«Եվ վերեն կսկսի մշուշի նման բան մը իջնել վար՝ դեպի փոսը՝ վերջալույսի կարմիր ճառագայթներուն տակ. իջնող մշուշին մեջ աղոտ կը նշմարվին կարծես դեմքեր» էջ386: Որոշակի տարբերություններ կան հրամայական եղանակի կազմության մեջ. է

խոնարհման բայերի եզակի հրամայականը ունի և վերջավորություն, տարբեր է նաև անկանոն, պատճառական բայերի հրամայականի կազմությունը:

«Աղեկ, եկո՞ւր, ինքդ բա՞ց»(զալ բայի հրամայական եղանակ) էջ388

«Բռնե՞ տեսնեմ, ձեռքս:»(բռնել) էջ389

«Մթափվե, արեղա, արթափվե!»(արթափվել) էջ390

«Մի տրտնջար. Քիչ ունի թե շատ, ինչ որ ունի, քեզի տվեր է:» էջ392

Արևմտահայերենի առանձնահատկություններից է անձնական դերանունների կրկնակի հոլովումը: «Հայրդ քեզի այդպես կանչեց» էջ372

«Չվարանեցար կյանքդ ինձի տալու»: էջ572

«Մեզի անպատճառ արև է պետք»: էջ400

Արևմտահայերենին հատուկ է ա,ե ձայնավորների հաճախակի սղումը:

«Մեզի պետք է քու ու զավկիդ արևը» էջ 267:

«Ես տեսա, երբ իրարու փաթթված դուրս եկան ալիքներուն մեջեն» էջ368:

«Դուն ամեն ինչ մոռցած՝ ալիքները կպատռեիր» էջ370:

«Ելեք դուրս, դուք, որ զգայարանքները չորցնել կուզեք ու կրքերը մարել»: էջ361

«Պինդ նստեք, չվախնաք» էջ363

«Ախ, գոնե գիտնայի, որ իզուր չէ այս ճգնությունը»: էջ383

«Հա, իրավ, մոռցա. Չե՞ որ լեցուց»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արևմտահայերենի դերն ու նշանակությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է հաճախակի խոսել արևմտահայերենի առանձնահատկությունների, կարևորության մասին:

Սովորաբար սովորողները դժվարանում են արևմտահայ հեղինակների ստեղծագործությունները ուսումնասիրելիս, այն է՝ ընթերցել, պատմել, արտասանել: Դա նրանից է, որ շատ քիչ առնչությունը արևմտահայերենի հետ: Ուստի անհրաժեշտություն կա դպրոցական ծրագրում ներառել արևմտահայերենի դասաժամեր: Որքան էլ արևմտահայերեն ստեղծագործությունները ուսումնասիրելիս սովորողին բացատրվում են նրան բնորոշ քերականական իրողությունները, միևնույն է դա բավական չէ:

Ուսումնական ծրագրում արևմտահայերենի ժամեր մտցնելու պարագայում կհեշտանա նաև ուսուցչի գործը գրականության նյութը մատուցելիս: Աշակերտները կսկսեն սիրով սովորել արևմտահայերեն ստեղծագործությունները, կկարդան արևմտահայերեն բնագրերը, և արևմտահայերենով գրված ստեղծագործությունները՝ այդ հսկա գրական ժառանգությունը կունենա իր արժանի ընթերցողը:

Որպես աշխարհիկի և հոգևորի բախում ներկայացնող ստեղծագործություն՝ «Հին աստվածներ» դրաման նորություն էր հայ գրականության պատմության մեջ: Ճիշտ մոտեցում է ցուցաբերվել այս երկի նկատմամբ՝ այն ընգրկելով դպրոցական ծրագրում:

Սովորողների մեջ այն կարող է դաստիարակել նրբագեղություն, մարդու ներաշխարհը հասկանալու կարողություն:

Լևոն Շանթի բարդ ու հակասական, վերելքներով ու վայրէջքներով ընթացող ստեղծագործական ուղին սկսվեց 1890-ական թվականների, հանդարտ ու մտերիմ քնարա-կան բանաստեղծություններով և ավարտվեց 1941 թվականին: Իր ստեղծագործություններով նա իր ընթերցողներին տարավ անուրջների աշխարհ, այնուհետև վերադարձավ մարդկանց առօրյա կյանք, պատկերեց առաքիչություններ և ստորացումներ, ոգևորվեց ազգային- ազատագրական պայքարի գաղափարներով:

Հուսահատված և վհատված սոցիալական և ազգային ճնշումներից, իրականության մեջ չտեսնելով ազատագրական պայքարի իրական ուժերին՝ Շանթը դիմեց հեռավոր անցյալին, այսինքն՝ մենավոր հոգիների ազատության տենչանքը մարմնավորեց պատմության խորքերում:

Կիրառվելիք մեթոդները

Արևմտահայերենի ուսուցումն արդյունավետ կազմակերպելու նպատակով օգտագործվելիք մեթոդներն են՝

- 1.Վեննի դիագրամ. արևելահայերենի և արևմտահայերենի նմանությունները և տարբերությունները ցույց տալու համար
- 2.Երկաթև, եռաթև, քառաթև աղյուսակներ- արևմտահայերենի, արևելահայերենի, գրաբարի և միջին հայերենի համեմատական բնութագրերը ցույց տալու համար
- 3.Մտագրոհ- արևմտահայերենի առանձնահատկությունները ցույց տալու համար
- 4.Ուղղորդված ընթերցանություն- դրամայի բովանդակությունը ընթերցելու, մեկնաբանելու համար
- 5.Հեղինակի աթոռ- գրողի կենսագրությունը ներկայացնելու համար
- 6.Կմախք- կերպարները վերլուծելու համար
- 7.Քառաբաժան- երկի բարոյահոգեբանական, գաղափարական բնութագիրը ներկայացնելու համար

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- 1 Սևակ Շանթ, «Հին աստվածներ» դրաման(բնօրինակը)
- 2 Յուրա Ավետիսյան, «Արևմտահայերենի ձեռնարկ»-ը
- 3 Էդուարդ Թովյան, «Լևոն Շանթի աշխարհայացքը» աշխատությունը
- 4 11-րդ դասարանի հայոց լեզվի և հայ գրականության դասագրքերը

Հղումներ

1. <https://www.youtube.com/watch?v=1NJVgXAbedk>
2. <https://www.youtube.com/watch?v=ziVroPVI3JY>
3. <https://www.youtube.com/watch?v=UdkCp9ydnhg>

